Բնական կերհանդակների վերականգնում Արթիկում

Նկարագրություն

Բնական կերհանդակները, որոնք **Հայաստանի տնտեսության** համար կարևոր անասնապահության հիմքն են՝ ապահովելով գյուղատնտեսական կենդանիների կերային պահանջմունքի մոտ **60%-ը,** էական դեր են խաղում շրջակա միջավայրի կայունության պահպանման գործում, սակայն կլիմայի փոփոխության ազդեցությունը, մասնավորապես օդի ջերմաստիճանի բարձրացումը միջինը **1.23°C**-ով և տեղումների նվազումը **10%-ով** վերջին տասնամյակներում խաթարել է արոտավայրերի կենսաբանատնտեսական արդյունավետությունը՝ առաջացնելով դեգրադացիա և էրոզիա, որոնք սրում են բնակավայրերի կորուստը և կենսաբազմազանության նվազումը:

Արթիկ, Փակված քարհանքի տարածք:

Անկանոն արոտօգտագործումը, համայնքամերձ արոտների **գերարածեցումը,** հեռագնա արոտների **դժվար հասանելիությունը** և **հերթափոխային արածեցման** համակարգի բացակայությունը, հանգեցնում են բուսական ծածկույթի նոսրացման 10-25%-ով, բարձրարժեք բուսատեսակների վերացման և սննդանյութերի կորստի, ինչը խաթարում է հողի ծակոտկենությունը, ջրի թափանցելիությունը և բույսերի աճի պայմանները՝ նպաստելով ջրային **էկոհամակարգերի լճացմանը և վնասմանը**:

Այս գործընթացները առաջացնում են **շղթայական ռեակցիաներ,** օրինակ՝ միջատների բնակավայրերի կորուստը ազդում է նրանցով սնվող կենդանիների վրա, ինչը խախտում է **սննդային շղթաները** և էկոհամակարգային հավասարակշռությունը, ընդ որում, այս խնդիրները սահմանափակում են **անասնաբուծության զարգացման հնարավորությունները** և մեծացնում **տնտեսական ծախսերը՝** պահանջելով արհեստական միջամտություններ:

Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակի կողմից իրականացվող ծրագրերը, ինչպիսիք են «**Արթիկ քաղաքի փակված քարհանքի թափոնների և ջրհեղեղների կառավարում**» ծրագրը, որի շրջանակում կատարվել են **60498.5 մ**^{3} հողային աշխատանքներ, տեղադրվել է **11571** գծամետր ոռոգման համակարգ, տնկվել **29318 ծառ** և թուփ (այդ թվում՝ սոճի, կաղնի, հացենի, գիհի), և **600 կգ** խոտաբույսերի սերմերի ցանք, ցույց են տալիս, որ հիմնավորված միջամտությունները, ինչպիսիք են պարարտացումը և սերմնացանը, բարելավում են կերային պաշարի որակը և

արտադրողականությունը՝ նվազեցնելով մարդածին ճնշումը **520 հա** դեգրադացված տարածքներում:

Նմանատիպ միջոցառումները **Դիլիջանում, Վեդիում, Փամբակում և Ֆիոլետովոյում՝ «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից էկոհամակարգերի և համայնքների հարմարվողականության կարողությունների ամրապնդում»** ծրագրի շրջանակում, կատարվել են հողի լաբորատոր անալիզներ և երկփուլ (աշուն-գարուն) պարարտացում հանքային ու օրգանական նյութերով, ցույց են տվել, որ կարելի է **վերականգնել բուսածածկը** և **բարձրացնել հարմարվողականությունը** կլիմայի փոփոխության պայմաններում, ինչը հաստատվում է երկրորդ տարվա ընթացքում պարարտանյութերի ծավալների կրճատմամբ:

Հողավերականգնման աշխատանքներ

Այս ծրագրերը, համաձայն **ՀՀ կառավարության** 28.10.2010**թ. հ**.1477-**Ն** որոշման, նպաստում են կենսաբազմազանության պահպանմանը, հողագոյացման ակտիվացմանը և էկոհամակարգերի կայուն զարգացմանը՝ միաժամանակ բարելավելով **սոցիալ-տնտեսական վիճակը համայնքներում**՝ լրացուցիչ եկամուտների ստեղծմամբ և բնակչության իրազեկվածության բարձրացմամբ դասընթացների ու մասնակցային մոտեցումների միջոցով:

Վարդաքարում, Հառիճում և Նահապետավանում իրականացված աշխատանքները, ներառյալ 620 գծամետր ցանկապատի կառուցումը և 1075 տնկիների տնկումը, ցույց են տալիս, որ համայնքների ներգրավվածությունը և տեղեկացվածությունը կարևոր են կայուն կառավարման համար, ինչը փոխում է բնակչության վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ և նպաստում է

բնապահպանական որոշումներում նրանց մասնակցությանը:

Աշխատանքներ Նահապետավան

Այսպիսով, **բնական կերհանդակների կայուն կառավարումը,** որը հաշվի է առնում կլիմայի փոփոխության ազդեցությունը և ներառում է արհեստական միջամտություններ, ինչպիսիք են ջրհեղեղների կառավարման համակարգերի կառուցումը և օդերևութաբանական կայանների տեղադրումը, ինչպես **Արթիկում**, ապահովում է էկոհամակարգերի վերականգնում, մթերատու ցուցանիշների բարձրացում և տնտեսական օգուտներ՝ խթանելով **Հայաստանի կայուն զարգացումը**:

Աիդա Սարգսյան, ԲԾԻԳ ՊՀ